ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2024 թվականի N 1265 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 448-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ծրագրային ապահովման գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ հաստատելու մասին» N 448-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սահմանել, որ Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ծրագրային ապահովման (SOFT), ինչպես նաև համակարգի ներդրման գործընթացի արդյունավետ կառավարման համար ներգրավվող խորհրդատուի ծառայությունների ձեռքբերման նպատակով Հայաս-

տանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվող գնման ընթացակարգերի շրջանակում մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու դրանց գնահատման համար ներկայացվող փաստաթղթերը, մասնակիցների կողմից հայտի, իսկ ընտրված մասնակիցների կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում չպահանջելու դեպքերը, իսկ պահանջելու դեպքում այդ ապահովումների չափերը, կանխավճարի չափը և կանխավճարի մարման կարգը, ինչպես նաև պայմանագրերին ներկայացվող հիմնական պայմանները, սահմանվում են գնման հայտերով՝ չկիրառելով հավելվածի 60-րդ կետի, 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության և նույն կետի 9-րդ ու 10-րդ ենթակետերը, 114-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի պահանջները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ